

ՆԱԻԱՍԱՐԴ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԱԶԳԻԱԿ

Ա. ՏԱՐԻ

ԹԻ 5

ԴԵԿՏԵՄԲԵՐ 2002

Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԵՆ ԿԸ ՄՊԱՍՈՒԻ ՄԻԵԻՆՈՅՆ ԹԱՓՈՎ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՄԻՆՉԵԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ

Այո՛, կը սպասենք. չըսելու համար կը պահանջենք: Եւ սահկա արդարօրէն, հարիր տոկոս իրաւունքով:

Կը սպասենք միայն յաղթանակ: Ընկրկում չենք ընդունիր, պարտութիւն չենք մարսեր: Նոյնիսկ դժուար ձեռք բերած յաղթանակը հաշտ աչքով չենք դիտեր:

Այս բոլորը մեծխօսիկութիւն չէ, ո՛չ ալ գոռոպութիւն կամ ամբարտաւան ինքնահաւանութիւն: Ո՛չ: Այլ՝ իրապաշտ մօտեցում: Ճիշդ է, որ ֆութպոլի մէջ իրապաշտութիւն չկայ, «գնդակը կլոր է» ի տրամաբանութիւն մը գոյութիւն ունի, բայց ատիկա կը վերաբերի համահաւասար, գրեթէ միեւնոյն մակարդակը ունեցող խումբերուն պարագային:

Լիբանանի ֆութպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան մէջ յստակ է խումբերուն պատկերը: Հոն ուշագրաւ է Հ.Մ.Ը.Մ.Ի կազմին գերակայութիւնը միւսներէն, որոնք յարաբերաբար մեր կազմին՝ համեատ խումբեր են, իսկ ոմանք՝ շատ աւելի համեատ, խուսափելու համար տկար հոմանիշի ոչ մարզավայել գործածութենէն:

Ուրե՞մն: Մեր ուսերուն կը դրուի յաւելեալ պարտք մը, որ այլ բան չէ, եթէ ոչ վերը յիշուած ընթացքը, այսինքն՝ միայն յաղթանակ եւ մեծ յաղթանակներ:

Հ.Մ.Ը.Մ.Ի բազմահապար համակիրները գիտակից՝ իրենց կոչումին, թրիպիւնը կը լեցնեն բերնէ - բերան: Անոնք իրենց «տուրքը» այս ձեւով կը վճարեն. պատրաստ են նաեւ այլ տեսակի «տուրք»եր ալ վճարելու, միայն թէ...

... Միայն թէ իրենց սիրելի խումբը շարունակէ միեւնոյն թափով, հպարտութեամբ լեցնէ իրենց սրտերը, Հ.Մ.Ը.Մ.Ի համակիր ըլլալու պատիւը հետպիտէ ամրապնդէ իրենց մէջ: Բ. դասակարգ փոխադրուելու դառնահամ կացութիւնը թերեւս կրնայ «ընդունելի» դառնալ միայն յարատեւ յաղթանակներու շարքով, եղանակին աւարտին ոչ միայն առաջին դիրքին վրայ գտնուելով, այլեւ ամբողջ ախոյեանութեան ընթացքին մնալով այդ դիրքին վրայ: Միայն այս ձեւով կարելի կ'ըլլայ արդարացնել տարուած ծով աշխատանքը, բարոյական թէ տնտեսական իմաստով հաւասարապէս: Մինչ այդ, մեր կազմը կը գտնուի բաւական լաւ օրերու մէջ:

Ակներեւ է խումբին ներդաշնակ խաղարկութիւնը, մարզիկներուն միջեւ տիրող ուրախ եւ համերաշխ մթնոլորտը, մարզիչին եւ պատասխանատուներուն տիրական եւ ողջունելի ներկայութիւնը դաշտին վրայ, անոնց ազդեցիկ հեղինակութիւնը մարզիկներուն մօտ: Ահա տուեալներ, որոնք յաջողութեան բանալի են: Պահե՛նք այդ բանալիները, բայց մի՛շտ ձգտելով աւելի լաւին, գերապանցին, որովհետեւ այդպէս կը հաւատայ մեր մեծ միութիւնը՝ Հ. Մ. Ը. Մ.ը: Տարբեր բացատրութիւն ունի՞ մեր նշանաբանը՝ «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր»:

Երթը կը շարունակուի: Յարատեւ պայքար, շարունակական յաղթանակներ, մինչեւ դէպի վերջնական յաղթանակ:

ՃԱՏՐԱԿԻ 35ՐԴ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ

ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԳՐԱԻԵՑ 7ՐԴ ԴԻՐՔԸ



Լիբանանի աղջկանց հաւաքականը ճատրակի ողիմպիականի վերջին հանգրուանին:

Սլովենիոյ Պլէտ քաղաքին մէջ տեղի ունեցած ճատրակի ողիմպիականին, Լիբանանը ներկայացնող Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի ճատրակի վարպետուհի Քնարիկ Մուրատեան առաջին խաղատախտակին վրայ գրաւեց անհատական ընդհանուր դասաւորման 7րդ դիրքը:

Ապահովելով կարելի 12 կէտերէն 8 կէտ (6 յաղթանակ, 4 հաւասարութիւն, 2 պարտութիւն), արաբական աշխարհի ախոյեան Քնարիկ Մուրատեան համարաբական ախոյեանութիւններուն իր գերակայութիւնը փաստելէ ետք եկաւ ցոյց տալու, թէ միջազգային բարձրագոյն մակարդակի մրցումներու ընթացքին նոյնպէս կրնայ յաջող արդիւնքներ արձանագրել:

Կ'արժէ նշել, որ բացի Քնարիկ Մուրատեանէն, դասաւորման առաջին տասնեակին մէջ տեղ գրաւած ճատրակի բոլոր վարպետուհիները աթլետական թէ եւ տարիքով ու փորձառութեամբ կը գերազանցեն Հ.Մ.Ը.Մ.ական քոյրը:

Լիբանանի աղջկանց հաւաքականին մաս կը կազմէր նաեւ 2002ի Լիբանանի աղջկանց ախոյեան Սիւզան Մուրատեան, որ ապահովեց 5,5 կէտ: Դժբախտաբար, Լիբանանի կազմին միւս երկու անդամները չկրցան լաւ արդիւնքներ արձանագրել (անոնց ապահոված կէտերուն միացեալ գումարը 4,5 էր) եւ Լիբանանի կազմը գրաւեց դասաւորման 74րդ դիրքը:



ՄԵՐ ԱՅՍ ԹԻԻՆ 4ՐԴ ԵՒ 5ՐԴ ԷՋԵՐԸ ՏՐԱՄԱԴՐՈՒԱԾ ԵՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԻՆ

ملحق ازياتك

ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՂՋԿԱՆՅ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԽՈՒՄԲԸ 2002-2003 ԵՂԱՆԱԿԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԼԱԽԱԳՈՅՆ ԿԱԶՄԵՐԷՆ ՄԷԿԸ

Երեքշաբթի, 19 Նոյեմբերին սկսաւ Լիբանանի պասքեթպոլի աղջկանց ախոյեանութիւնը: Մրցաշարքին իր մասնակցութիւնը կը բերէ նաեւ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի պասքեթպոլի աղջկանց Ա. խումբը, որ նախորդող տարեշրջանին նոյն այս մրցաշարքը աւարտեց 3րդ դիրքին վրայ եւ շահեցաւ պրոնզէ մետալը:

Անցեալ տարեշրջանի աւարտէն ետք Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի խումբը, կարճ դադարէ մը ետք վերսկսաւ իր փորձերուն, Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ. մարզամշակութային համալիրի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ:

Տեղական խումբերէն միայն մէկ մարզիկ՝ Մակալի Սաֆար (Սատաքա) միացաւ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի, իսկ մնացեալ նորեկ անդամները եկան Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի տարիքային խումբերէն, ամբողջացնելու համար կազմը: Թէեւ տարիքով փոքր, այս նորեկ մարզիկները Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի պասքեթպոլի դպրոցին մէջ իրենց սորվածը լաւագոյն ձեւով սկսած են կիրարկել դաշտին վրայ:

Խումբին միակ «օտար» մարզիկը ժամանեց հայրենիքէն: Աննա Մամիկոնեան (20 տարեկան, 1,94 սմ.) վերջին եղանակին ելոյթ կ'ունենար Ռուսիոյ Սքիֆ ակումբին հետ:

Խումբին մարզիչ նշանակուեցաւ Լիբանանի պասքեթպոլ-



լի տղոց հաւաքականին օգնական մարզիչը՝ Սարգիս Գորճեան, որ առաջին իսկ օրէն սկսաւ խիստ փորձերու, թէ՛ Ֆիզիքապէս, թէ՛ խաղաոճով պատրաստելու խումբը 2002-2003 տարեշրջանի պասքեթպոլի ախոյեանութեան:

Նախապատրաստութեան ծիրէն ներս Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի խումբը կատարեց 2 փորձ-մրցումներ, զորս աւարտեց յաղթանակով, յաջորդաբար պարտութեան մատնելով Ռիատին (48-30) եւ Սատաքան (57-50):

Մրցաշարքի իր առաջին մրցումին, որ տեղի պիտի ունենար Երեքշաբթի, 19 Նոյեմբերին, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս պիտի մրցէր Պլու Սթարզի դէմ, սակայն վերջին օրը Պլու Սթարզ քաղուեցաւ մրցաշարքէն:

Իր 2րդ պաշտօնական մրցումին, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս Զորեքշաբթի, 27 Նոյեմբերին, Մզհէրի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին վրայ մրցեցաւ Սատաքայի դէմ:

Մրցումը աւարտեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ յաղթանակով՝ 74 - 49 արդիւնքով:

Խումբին միջին տարիքն է 19,7, իսկ միջին բարձրութիւնը 1,72 մետր Յաջողութիւն եւ բարի երթ:

Ստորեւ կը ներկայացնենք Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի աղջկանց խումբը:



Ո՞Վ Է ԱՆՆԱ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

Ծնած է Երեւան, 1982ին:

Յաճախած է Երեւանի Դաւիթ Յարութիւնեանի անուան դպրոցը:

13 տարեկանին անդամագրուած է «Կրանտ ակումբ»ի, իբրեւ պասքեթպոլիստ, ուր մարզիչ ունեցած է Համիլթոն Առաքելեանը մինչեւ 2002 թուական, փոխադրուած է Մոսկուա եւ ընդունուած՝ Մոսկուայի գիղատնտեսական համալսարանը եւ իր մասնակցութիւնը բերած թիմերեցեսքայա պասքեթի խումբէն:

Մաս կազմած է Հայաստանի պասքեթպոլի հաւաքականին:



ԱՆՈՒՆ ՄԱԿԱՆՈՒՆ	Տարիք	ՀԱՍԱԿ	ԿՇԻՌՔ	ԴԻՐՔ
Սէնտի Սիմոնեան	23	170 սմ.	58 քկ.	2,3
Ալին Լօշխաճեան	19	170 սմ.	51 քկ.	1,2,3
Կրէյս Սթանպուլեան	24	160 սմ.	62 քկ.	1-
Սանան Մարգարեան	26	170 սմ.	58 քկ.	3,4
Ալիք Թապագեան	17	172 սմ.	57 քկ.	2,3
Դալար Արսլանեան	19	173 սմ.	68 քկ.	4-
Միրէյ Սվանեան	18	174 սմ.	76 քկ.	4-
Ռոզիկ Զոպանեան	28	171 սմ.	61 քկ.	3,4
Սարին Գոյուսճեան	16	168 սմ.	50 քկ.	2,3
Յոլինէ Գազանճեան	16	173 սմ.	65 քկ.	4-
Սուլա Աբրամեան	14	160 սմ.	50 քկ.	1-
Նաթալի Սվանեան	14	165 սմ.	52 քկ.	2,3
Մակալի Սաֆար	22	180 սմ.	70 քկ.	4,5
Լոտի Ժաաթաա	19	180 սմ.	82 քկ.	4,5
Աննա Մամիկոնեան	20	194 սմ.	80 քկ.	4,5

Մարզիչ՝ Սարգիս Գորճեան
Օգնական մարզիչ՝ Բաֆֆի Գասապեան

Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԾԱՏՐԱԿԻ ՓՈՐՉԵՐԸ ԿՐ ՎԵՐՍԿՄԻՆ ՄԵԾ ԹԱՓՈՎ



Ամառնային դադարէն ետք, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի ճատրակի կրտսերներու խումբը վերսկսաւ իր փորձերուն: Խումբը, որ կը հաշուէ աւելի քան 20 փոքրիկներ եւ պատանիներ, կը բաղկանայ նորեկներէ՝ ինչպէս նաեւ նախորդ տարեշրջանէն արդէն փորձերուն հետեւող եւ յաճախ փայլուն արդիւնքներ արձանագրած Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներէ:

Արդարեւ, խումբին մաս կը կազմեն Լիբանանի մինչեւ 12 տարեկան աղջկանց փոխ ախոյեան Մեղրի Կիրակոսեան, միեւնոյն տարիքային դասակարգի Լիբանանի տղոց ախոյեանութեան Յրզ հանդիսացած Հրակ Փափագեան, 2001ի ԼԵՎԱՄԻ ախոյեան Արամ Կիրակոսեան, ինչպէս նաեւ Կարէն Պօղոսեան, Հրայր Եսայեան, Քրիստ Գարակէօզեան, Հրակ Գարագաշեան, Հայկ Պչաքճեան, Ռոստոմ Տանակէօզեան եւ Վան Տանակէօզեան:

Նորեկներու կարգին նշենք Աբիկ - Սարէն Աբրահամեանի, Նարեկ Իփրաճեանի, Արամ Աբրահամեանի, Մեղրի Մեսրոպեանի եւ Կայէլ Մարկարոսեանի անունները:

Ուրբաթ օրերը ժամը 6:30 - 8:00 տեղի ունեցող ճատրակի փորձերուն կը վերահսկեն Խաչիկ Մուրատեան եւ Լիբանանի աղջկանց ախոյեան Սիւզան Մուրատեան:

Խումբը լրջօրէն կը պատրաստուի Լիբանանի անհատական եւ դպրոցական յառաջիկայ ախոյեանութիւններուն, կ'ընտրուին 2003ին Լիբանանը համաարաբական եւ համաշխարհային մրցաշարքներու ընթացքին ներկայացնողները:



2006Ի ՄՈՆՏԻԱԼԻՆ ԼՈԿՈՆ

2006ի Մոնտիալի հիւրընկալ Գերմանիա ներկայացուց իր լոկոն:

Լոկոն կ'ընդգրկէ երեք ժպտուն դէմքեր, որոնք կը յուշեն, թէ Գերմանիա երեք անգամ շահած է Մոնտիալի բաժակը:

2006ի Մոնտիալի կազմակերպիչ յանձնախումբին նախագահը՝ Ֆրանց Պեքընպաուզը յայտարարութեան մը ընթացքին ըսաւ. «Մեր երկրին մէջ 2006ի Մոնտիալը հիւրընկալելով կ'ուզենք բոլոր երկիրներուն համակիրները ի մի խմբել՝ իբրեւ բարեկամներ: Վստահաբար բոլորն ալ գիտեն, որ Գերմանիա լաւագոյնս կրնայ հիւրընկալել որեւէ տեսակի մրցաշարք: Սակայն մենք կ'ուզենք, որ այս Մոնտիալով փաստուի եւ բոլորն ալ զգան, որ կը գտնուին իրենց տան մէջ»:

Կազմակերպիչ յանձնախումբին փոխ նախագահը՝ Ֆետոր Ռէտման, իր կարգին, բոլոր երկիրներուն համակիրները իբրեւ մէկ ժողովուրդ նկատի առնելով ըսաւ. «Կ'ուզենք բոլորին ալ նկատողութեան յանձնել այն իրականութիւնը, որ անոնք պէտք է զգան իրենց տան մէջ եւ իրենց սոնախմբութիւնները կատարեն Եւրոպայի սրտին վրայ գտնուող Գերմանիոյ մէջ»:

Ֆետոր Ռէտման յատուկ հարցազրոյց մը ու-

նենալով գերմանական «Տի Յայթ» շաբաթաթերթին հետ ըսաւ. «2006ի Մոնտիալը պիտի փորձենք նախորդներէն քիչ մը տարբեր ձեւով կատարել, մասնաւորաբար բացման մրցումը: Աւանդութենէն դուրս գալով, բացման հանդիսութենէն պիտի անջատենք մրցաշարքին առաջին ճակատումը՝ բացման մրցումը»:

Այս մէկը կը նշանակէ, թէ բացման հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ մէկ օր առաջ, այսինքն՝ 8 Յունիս 2006ին. մէկ օր ետք՝ բացման մրցումը: Նշենք, թէ ըլլա՛յ բացման հանդիսութիւնը, ըլլա՛յ բացման մրցումը տեղի պիտի ունենան Միւնիխի մէջ կառուցուող նոր դաշտին վրայ: 2006ի Մոնտիալին աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ Պերլինի Ողիմպիական դաշտին վրայ:

Նախապէս, Գերմանիա մէկ անգամ հիւրընկալած է Մոնտիալը՝ 1974ին եւ իր երկրին մէջ տիրացած է բաժակին: Անիկա առաջին անգամ աշխարհի ախոյեան հանդիսացած է 1954ին (Չուիցերիոյ մէջ), իսկ երրորդ անգամ՝ 1990ին, Իտալիոյ մէջ:

2002ի Մոնտիալին, որ տեղի ունեցաւ Ճապոնի եւ Հարաւային Գորէյայի մէջ, Գերմանիա լաւագոյն առիթը ունէր հաւասարելու Պրագիլի հաստատած աշխարհի մրցանիչին, որ չորս անգամ՝ 1958ին, 1962ին 1970ին եւ 1994ին բարձրացուցած էր այդ բաժակը: Սակայն Գերմանիա ոչ միայն չկրցաւ այդ մրցանիչին հաւասարիլ, այլեւ առիթը տուաւ Պրագիլի, որ ամրապնդէ եւ բարելաւէ



Գերմանիոյ ֆութպոլի ֆետերասիոնին նախագահը՝ Կերհարտ Մայրովորֆէլտըր (ձախիմ) եւ Ֆրանց Պեքընպաուզը

իր իսկ հաստատած մրցանիչը, հինգերորդ անգամ ըլլալով շահելով բաժակը:

Գերմանիա դժուար բայց կարեւոր առաքելութիւն մը ունի կատարելիք, որովհետեւ ոչ մէկ ճիգ պիտի խնայէ չորրորդ անգամ ըլլալով տիրանալու տիտղոսին:

Հ.Մ.Բ.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՍԿԱՆ ԽՈՒՄԲԸ 2002 - 2003 ԵՂԱՆԱԿԻ Բ. ԳՈՍՍԱԿՍՐԳԻ ԱԽՈՑԵԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՑՈՂ

2002 - 2003 եղանակին, ֆուտպոլի մեր կազմը կը պարզէ բաւական լաւ վիճակ մը մինչեւ օրս: Անշուշտ կը սպասենք, որ ան միեւնոյն այս թափով շարունակէ եւ եղանակի աւարտին վերադառնայ իր բուն պատուանդանին՝ Ա. դասակարգ:

Աւելի մօտէն ծանօթացնելու համար մեր տղաքը, «Նաւասարդ»-ի մեր թիւին երկու այս էջերը կը տրամադրենք անոնց, ինչպէս նաեւ Ա. էջի մեր խօսքը «կը նուիրենք» իրենց, որուն դիմաց ունինք միայն մէկ ակնկալութիւն՝ յարատեւ յաղթանակ: Յաջողութիւն անոնց երթին:



1.- Սարգիս Էսքիբեան (բերդապահ). 21 տարեկան. 3 տարիէ ի վեր մաս կը կազմէ Հ.Մ.Բ.Մ.Ի ներկայացուցչական խումբին: Այս տարի ան հրաւիրուեցաւ Լիբանանի Ողիմպիականի խումբին մաս կազմելու:

Պոլըն Համուտի խումբէն. առաջին տարին է Հ.Մ.Բ.Մ.Ի ներկայացուցչական խումբին հետ:



4.- Յարութ Սարգիս (բերդապահ), 16 տարեկան, Հ.Մ.Բ.Մ.Ի կրտսերներու խումբէն փոխանցուած. առաջին տարին է Հ.Մ.Բ.Մ.Ի ներկայացուցչական խումբին հետ:



2.- Սագօ Մընասսա (բերդապահ). 31 տարեկան, 7 տարիէ ի վեր մաս կը կազմէ Հ.Մ.Բ.Մ.Ի խումբին:



5.- Լեւոն Խաչատուրեան (յետսապահ). 27 տարեկան, 10 տարիէ ի վեր մաս կը կազմէ Հ.Մ.Բ.Մ.Ի:

սապահ - շուէտացի). 30 տարեկան, երկրորդ տարին ըլլալով կը կրէ Հ.Մ.Բ.Մ.Ի շապիկը:



7.- Յարութ Կիլիւզեան (յետսապահ). 22 տարեկան, երեք տարիէ մաս կը կազմէ Հ.Մ.Բ.Մ.Ի:



8.- Վարդան Փոշոյեան (յետսապահ). 29 տարեկան, երեք տարիէ ի վեր մաս կը կազմէ ներկայացուցչականին: Փոխանցուած՝ Հ.Մ.Բ.Մ. Պոլըն Համուտէն:

(հայաստանցի, յետսապահ). 42 տարեկան 1992 - 1998 մաս կազմած է Հ.Մ.Բ.Մ.Ի: Ապա մինչեւ 2001 մաս կազմած է Սալամի եւ վերադարձած՝ Հ.Մ.Բ.Մ.:



10.- Վարդան Պոյանեան (յետսապահ). 22 տարեկան, 2 տարիէ ի վեր մաս կը կազմէ Հ.Մ.Բ.Մ.Ի. փոխանցուած՝ կրտսերներէն:



11.- Ներսէս Պերպերեան (յետսապահ). 24 տարեկան, երեք տարիէ ի վեր մաս կը կազմէ ներկայացուցչականին:

(յետսապահ). 21 տարեկան, չորս տարիէ ի վեր մաս կը կազմէ Հ.Մ.Բ.Մ.Ի:



13.- Մոհամէտ Սաուտա (յետսապահ). 23 տարեկան, առաջին տարին՝ Հ.Մ.Բ.Մ.Ի հետ: Փոխանցուած՝ Պէյրուտի Ամերիկեան համալսարանէն:



14.- Դաւիթ Անեմեան (յետսապահ). 24 տարեկան, երկրորդ տարին՝ Հ.Մ.Բ.Մ.Ի հետ:



3.- Ժաք Պչաքեան (բերդապահ). 27 տարեկան, փոխանցուած՝ Հ.Մ.Բ.Մ.:



6.- Թոմաս Պիրք (յետ-



9.- Սամուէլ Պօղոսեան



12.- Մհեր Պերպերեան



15.- Գեորգ Փուշեան (յետսապահ). 21 տարեկան, առաջին տարին՝ ներկայա-

ցուցչականին հետ: Փոխանցուած է Հ.Մ.Լ.Մ. Պոլրճ Համուտէն:



16.- Բաֆֆի Զուլֆանի (միջնապահ). 39 տարեկան, 1983էն 1998 մաս կազմած է Հ.Մ.Լ.Մ-ի: Ապա մաս կազմել է ետք Սաժէսի եւ Հ.Մ.Մ-ի, վերադարձաւ Հ.Մ.Լ.Մ. (2001ին). նախապէս Լիբանանի ֆուտպոլի ազգային խումբին մաս կազմած է (1996ին):



17.- Նապիլ Շէյխո (միջնապահ). 30 տարեկան, առաջին տարին՝ Հ.Մ.Լ.Մ-ի հետ. փոխանցուած՝ Սաֆայէն: 1996ին մաս կազմած է Լիբանանի ազգային խումբին:



18.- Ճոնի Քութանի (միջնապահ). 22 տարեկան, երեք տարիէ մաս կը կազմէ Հ.Մ.Լ.Մ-ի: Տըքուանէի Ռաուտայէն փոխանցուած:



19.- Վարդան Ղազարեան (հայաստանցի, միջնապահ). 32 տարեկան, 1992 - 1998 մաս կազմած է Հ.Մ.Լ.Մ-ի, ապա փոխանցուած՝ Սաժէսի մինչեւ 2002 եւ վերադարձած՝ Հ.Մ.Լ.Մ.: Լիբանանի ֆուտպոլի ազգային խումբին շապիկը կրած եւ Ասիոյ լաւագոյն ֆուտպոլիստը ընտրուած է (1996ին), իսկ 1996ին եւ 1997ին ընտրուած է Լիբանանի լաւագոյն ֆուտպոլիստը:



20.- Տէնի Նսարր (յառաջապահ). 28 տարեկան, առաջին տարին՝ Հ.Մ.Լ.Մ-ի հետ. փոխանցուած՝ Սաժէսէն:



21.- Դրո Քեհեեան (յառաջապահ). 32 տարեկան, 1996էն 1998 մաս կազմած է Հ.Մ.Լ.Մ-ի, ապա միացած՝ Նըժմէի եւ անոր հետ երկու անգամ հանդիսացած՝ Լի-

բանանի ախոյեան: 1996ին Լիբանանի ազգային խումբին մաս կազմած է. ան այս տարի վերադարձաւ Հ.Մ.Լ.Մ.: Խումբին խմբապետն է:



22.- Սագո Տօնապետեան (յառաջապահ). 29 տարեկան, 1989էն ի վեր մաս կը կազմէ Հ.Մ.Լ.Մ-ի:



23.- Յակոբ Տօնապետեան (յառաջապահ). 20 տարեկան, չորս տարիէ վեր մաս կը կազմէ Հ.Մ.Լ.Մ-ի: Փոխանցուած՝ կրտսերներէն: Ան մաս կը կազմէ Լիբանանի ֆուտպոլի ազգային խումբին:



24.- Սեպուհ Պապիկեան. խումբին օգնական մարզիչը: 1986էն 1989 մաս կազմած է Հ.Մ.Լ.Մ-ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբին: Վկայեալ Ֆրանսայէն:



25.- Վաչէ Սարգիսեան. Հ.Մ.Լ.Մ-ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբին կը բացակային՝ Սերոբ էքմէքեանի (18 տարեկան - յառաջապահ), Թարէք Սիպահի (21 տարեկան - միջնապահ) եւ Շաֆիք Սիտանիի (22 տարեկան միջնապահ) լուսանկարները:



Եւ ըսել, որ այս հազարաւոր «Խենթ»երը կը հետեւին Բ. դասակարգի ախոյեանութեան...

ԼՈՒՐԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՊԻՏԻ ՄԱՍՆԱԿՅԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԿԱՆԱՆՑ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Դեկտեմբեր 5ին ԵՈՒ-Է-ԷՖ-Ա. պիտի կատարէ 2005ի Եւրոպայի կանանց ֆուտբոլի ախոյեանութեան զտուժի մրցումներու վիճակաձգութիւնը:

Մալթայի եւ Ղազախստանի կողքին, Հայաստան առաջին անգամ ըլլալով իր մասնակցութիւնը պիտի բերէ այս ախոյեանութեան:

34 երկիրներ պիտի ճակատին զտուժի մրցումներուն, իրենց տեղը ապահովելու համար Անգլիոյ մէջ տեղի ունենալիք աւարտական հանգրուանի մասնակից խումբերու ընտրանիին մէջ:

Նշենք, որ Եւրոպայի կանանց ֆուտբոլի ախոյեանութեան տիտղոսակիրը Գերմանիան է, որ 2001ին շահեցաւ ախոյեանութիւնը:

«ՓԻՆԻԿ» ԿՐՆԱՅ ԽԱԽՏԵԼ ՏԵՍՈՒՐ ԱՒԱՆԴՈՅԹԸ

Երեւանի Փիւնիկը հնարաւորութիւն ունի Յունուարին Մոսկուայի մէջ տեղի ունենալիք ԱՊՀի անդամ, ինչպէս նաեւ Պալթեան երկիրներու ախոյեաններու բաժակի մրցումներու զտուժի հանգրուանը աւարտելու առա-

ջին դիրքին վրայ, յայտարարեց Հայաստանի ֆուտբոլի ֆետերասիոնը: Արդարեւ, կը նախատեսուի, որ Փիւնիկ յաղթէ Տաճկաստանի ախոյեան «Ռեզար-Տատաղ» խումբին: Ինչ կը վերաբերի Երեւանի ակումբին 2 միւս մրցակիցներուն՝ Պիելոուսիոյ «ԲԱՏԷ»ի եւ Ռիկայի «Սկոնտո»ի, այն համոզումը կայ, որ Փիւնիկի մակարդակը շատ չի տարբերիր անոնց մակարդակէն:

Ասիկա կը նշանակէ, թէ «Փիւնիկ»ը ի վիճակի է խախտելու վերջին տարիներու տիտղոս աւանդոյթը: արդարեւ, Հայաստան մօտիկ անցեալին բնաւ չէ յաջողած այս մրցաշարքին Բ. հանգրուան անցնիլ:

Նշենք, որ Բ. հանգրուանի տոմս ապահովելու համար Հայաստան պէտք է գրաւէ իր ենթախմբակի առաջին կամ երկրորդ դիրքը:



ՓԻՆԻԿ ՀԱՆԴԻՍԱՅԱԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱԽՈՅԵԱՆ

Յաջորդաբար 2րդ տարին ըլլալով Փիւնիկ Երեւան հանդիսացաւ Հայաստանի ֆուտբոլի ախոյեան: Աւելի կանուխ նաեւ Հայաստանի ֆուտբոլի բաժակին տիրացած Փիւնիկ արդէն ինքզինք հաստատած է իբրեւ Հայաստանի հյօրագոյն խումբը:

Փիւնիկ Հայաստանի ախոյեանութեան ծիրէն ներս կատարած իր 22 մրցումներէն 19ը աւարտեց յաղթանակով, արձանագրեց 2 պարտութիւն եւ 1 հաւասարութիւն՝ ապահովելով 59 կէտ:

Երկրորդ հանդիսացաւ Շիրակ (Կիւմրի), որ ապահովեց 51 կէտ: 50 կէտով 3րդ հանդիսացաւ Բանանց Երեւան, մինչ Սպարտակ Երեւան հաւաքեց 49 կէտ (4րդ):

Նշենք, որ վերոնշեալ կապներուն եւ այս տարի Հայաստանի ախոյեանութեան բարձրագոյն դասակարգի մրցումներուն մասնակցող 8 այլ կապներուն միջեւ մակարդակի նկատառելի տարբերութիւն գոյութիւն ունի: Արդարեւ, ախոյեանութեան վերջնական դասաւորման հինգերորդ հորիզոնականը գրաւող Արարատ Երեւան 16 կէտով կը մնայ 4րդ դիրքը գրաւող Սպարտակէն:

Կոլսքորըներու դասաւորման պարագլուխի դիրքը գրաւեց Արման Քարամեան (Փիւնիկ) 36 կոլով: Սպարտակէն Արա Յակոբեան (21 կոլ) հանդիսացաւ երկրորդ, մինչ 15ական կոլերով 3րդ հանդիսացան Արտիոմ Ադամեան (Տինամօ/Միքա) եւ Արամ Յակոբեան (Սպարտակ):

Ստորեւ կը ներկայացնենք վերանկախացումէն ետք Հայաստանի ֆուտբոլի ախոյեանութեան տիրացող խումբերուն ցանկը.

- 1992 Շիրակ Կիւմրի եւ Հ.Մ.Ը.Մ. Երեւան
- 1993 Արարատ Երեւան
- 1994 Շիրակ Կիւմրի
- 1995/1996 Փիւնիկ Երեւան (Հ.Մ.Ը.Մ.)
- 1996/1997 Փիւնիկ Երեւան (Հ.Մ.Ը.Մ.)
- 1998 Յեմենտ Արարատ
- 1999 Շիրակ Կիւմրի
- 2000 Արաքս Արարատ
- 2001 Փիւնիկ Երեւան
- 2002 Փիւնիկ Երեւան



ՃԱՏՐԱԿԻ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՆԱՅ ՅՐԴ

25 Հոկտեմբերին 11 Նոյեմբերին, Սլովենիոյ Պլէտ քաղաքը հիւրընկալեց ճատրակի 35րդ Ողիմպիականը, որուն իրենց մասնակցութիւնը բերին տղոց 134 եւ աղջրկանց 89 հաւաքականներ: Ախոյեանութեան տիտղոսին տիրացաւ ճատրակի աւանդական տիտանը՝ Ռուսիա, ապահովելով 38,5 կէտ: Ռուսիոյ կապւմը կը գլխաւորէր Կէրի Գասպարով, որ ոչ միայն իր արձանագրած յաղթանակներով, այլ նաեւ խումբին մէջ սոսկական իր ներկայութեամբ մղիչ ուժը հանդիսացաւ Ռուսիոյ հաւաքականին: Նշենք, որ Գասպարով վերջին անգամ ճատրակի Ողիմպիականին մասնակցած էր 1996ին՝ Երեւանի մէջ: Ան պոչքոթի ենթարկած էր 1998ի եւ 2000ի Ողիմպիականները:

Տղոց մրցումներուն փոխ ախոյեան հանդիսացաւ Հունգարիոյ հփոց կապւմը (37,5 կէտ), որուն մաս կը կապմէին աստղեր Փիթըր Լեքօ եւ ճատրակի պատմութեան հփոցագոյն վարպետուհին՝ Ճիւտիթ Փոլկար:

Հայաստան անգամ մը եւս փաստեց, որ կը մնայ տիրական ներկայութիւն՝ ճատրակի խմբային մրցումներուն: Հայաստանի կապւմը, որուն մաս կը կապմէին Վլատիմիր Յակոբեան, Սմբատ Լպուտեան, Կարէն Սարեան, Գաբրիէլ Սարգիսեան, Աշոտ Անաստասեան եւ Արտաշէս Մինասեան, ապահովեց 35 կէտ եւ հանդիսացաւ Յրդ: Յատկանշական է այն իրողութիւնը, որ Ողիմպիականի ամբողջ 14 հանգրուաններուն ընթացքին Հայաստանի կապմին առաջին երեք խաղատախտակներու վրայ հանդէս եկող վարպետները ոչ մէկ պարտութիւն կրեցին: Աւելի՛ն. Վլատիմիր Յակոբեան պարտութեան մատնեց աշխարհի ախոյեան ուքրանացի Ռուսլան Փոնոմարիովը, եւ հաւասարութիւն մը արձանագրեց աշխարհի թիւ 1 դասուած Կէրի Գասպարովի դէմ:

Աղջկանց մրցումներուն Չինաստան յաջորդաբար Յրդ անգամ ըլլալով տիրացաւ տիտղոսին:

Հայաստանի աղջկանց կապմին անդամներն էին Լիլիթ Մկրտչեան, Էլենա Դանիէլեան, Գոհար Հլղաթեան եւ Լիլիթ Գալոյեան: Կապւմը գրաւեց 11րդ պատուաբեր դիրքը:



ՀԱՅՐԵՆԻ ՊԱՏԱՆԻ ԹԵՆԻՍՄԵՆՆԵՐ ՊԻՏԻ ՈՒՂՂՈՒԻՆ ՖԼՈՐԻՏԱ

Դեկտեմբեր 15ին, Միացեալ Նահանգներու Ֆլորիտա նահանգին Մայեմի քաղաքին մէջ պիտի սկսի թենիսի աշխարհի կրտսերներու ախոյեանութիւնը, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Հայաստանը ներկայացնող Տաթեւիկ եւ Ռոման Եղիգարեանները:

ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ՉԱԽՈՂ ԱՐԴԻԻՆՔՆԵՐ



Աշոտ Դանիէլեան

Վարչաւայի մէջ Նոյեմբերին տեղի ունեցած ծանրաբարձութեան աշխարհի ախոյեանութեան Հայաստան արձանագրեց ոչ համոզիչ արդիւնքներ:

Արդարեւ, Հայաստանը ներկայացնող 4 ծանրաբարձներէն Յը, որոնց կարգին Եւրոպայի նախկին ախոյեան Աշոտ Դանիէլեան, դուրս մնացին ախոյեանութեան գտումի հանգրուանէն: Միայն 62 քվ. կշիռքային դասակարգին մէջ Արթիւր Դանիէլեան գրաւեց 7րդ դիրքը:

Հայրենի մեկնաբաններու իսկ հաստատումով, Հայաստանի ծանրաբարձները նման անյաջողութիւն

երբեք չեն ունեցած: Պատկան մարմիններ կը պատրաստուին հարցին լուծում բերելու:

www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com
www.aztagdaily.com

2003Ը ԱՅՍՊԵՍ ՊԻՏԻ ՅԱՏԿԱՆՇՈՒԻ

ՄԱՐԶԱՇԽԱՐՀ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍԱՄԲ ՆՈՐԻՆ



Վերջերս «Տի Իբոնումիսթ» պարբերաթերթին մէջ լոյս տեսած մէկ յօդուածը փորձած է նախատեսել 2003ին տեղի ունենալիք ամէնէն յատկանշական եւ ուշագրաւ մարզական դէպքերը եւ անոնց արդիւնքները:

Արդարեւ, ըստ սոյն յօդուածին, 2003ին երկու մրցաշարքեր իրենց վրայ պիտի կեդրոնացնեն բոլոր լուսարձակները եւ մեծ աղմուկ պիտի բարձրացնեն, գոնէ՝ որոշ ցամաքամասերու եւ երկիրներու մէջ, նկատի ունենալով, որ այս մրցաշարքերուն զուգահեռ տեղի պիտի ունենան նաեւ քաղաքական եւ կրօնական տաք ու հետաքրքրական «ճակատամարտեր»:

Առաջին հերթին, Հարաւային Աֆրիկէի մէջ կայանալիք եւ Փետրուար 8էն Մարտ 23 երկարելիք քրիքէթի աշխարհի ախոյեանութիւնը մեծ խանդավառութիւն յառաջ պիտի բերէ հիւրընկալ երկրին, Մայրագոյն Արեւելքի երկիրներուն եւ Կեդր. Ամերիկայի կարգ մը կղզիներուն մէջ: Պատճառը... Այս մրցաշարքին ընթացքին դէմ յանդիման պիտի գան Փաքիստանի եւ Հնդկաստանի քրիքէթի ազգային խումբերը...

Մարզական դիտանկիւնէ դիտուած՝ հարցը կրնայ շատ պարզ թուիլ, սակայն երբ մուտք գործենք կրօնական ու քաղաքական հարցերու դռնէն ներս, ամէն բան կը յեղաշրջուի: Արդարեւ, «քրիքէթի խենթ» այս երկու երկիրներուն ազգային խումբերը իբրեւ ազգասէր զինուորներ պիտի ճակատին, առիթ տալով, որ իրենց երկիրներուն միջեւ գտնուող երկարատեւ ատելութիւնը թափանցէ նաեւ մարզական աշխարհէն ներս:

Մրցաշարքը հիւրընկալող Հարաւային Աֆրիկէ, որ 1995ին հիւրընկալած էր ռակպիի աշխարհի ախոյեանութիւնը, իսկ անցեալ տարի 2006ի Մոնտրիալը հիւրընկալելու պատիւը գիջած՝ Գերմանիոյ, պիտի փորձէ իր լաւագոյնը տալ հակառակ համեստ կազմ մը ունենալուն, իսկ մրցաշարքին գլխաւոր թեկնածուն նկատուող բաժակիր Աւստրալիա պիտի գայ հաստատելու իր գերակայութիւնը այս մարզէն ներս: Հակառակ այս բոլորին, սակայն, կը սպասուի որ Հնդկաստան-Փաքիստան մրցումը ըլլայ ամէնէն աւելի դիտուելիք մրցումը, դէմ յանդիման բերելով հնդիկ «պրահմանական»ներն ու փաքիստանցի իսլամները:

Քրիքէթի ախոյեանութիւնը հաւանաբար հետաքրքրութիւն անգամ պիտի չչարժէ Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ, սակայն այս շրջաններն ալ պիտի գտնուին այլ մրցաշարքի մը ազդեցութեան տակ, որ այս անգամ պիտի ըլլայ աւելի կարճ եւ կոշտ:

Արդ, ռակպիի ախոյեանութիւնը տեղի պիտի ունենայ Աւստրալիոյ մէջ՝ Հոկտեմբեր 3էն Նո-

յեմբեր 15ի միջեւ եւ միլիոնաւոր հանդիսատեսներու ուշադրութիւնը իր վրայ պիտի կեդրոնացնէ, փորձելով վերջ մը դնել Աւստրալիա-Նոր Զելանտա դիւրադրուութեան:

Այս հարցին գլխաւոր պատճառը յայտնաբերելու համար, պէտք է 16 տարի ետ երթանք եւ վերադառնանք 1987 թուական, երբ տեղի ունեցաւ ռակպիի առաջին ախոյեանութիւնը: Առաջին այս ախոյեանութիւնը միասնաբար հիւրընկալեցին Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի ռակպիի միութիւնները, իսկ աւելի ուշ ռակպիի աշխարհը բաժնուեցաւ երկուքի՝ հարաւային եւ հիւսիսային:

Այնուհետեւ, հարաւային եւ հիւսիսային երկիրները սկսան փոխն ի փոխ հիւրընկալել աշխարհի ախոյեանութեան մրցաշարքերը՝ այս մէկը սովորութիւն մը դառնալով՝ ռակպիի համակիրներուն թիւը տարուէ տարի բազմապատկուեցաւ:

2003ին, մրցաշարքը հիւրընկալելու կարգը հասած ըլլալով հարաւային Աշխարհամասին, ծրագրուած էր, որ Աւստրալիա եւ Նոր Զելանտա միասնաբար հիւրընկալեն զայն, սակայն մե-

տասաներորդ պահուն երկու յանձնախումբերուն միջեւ ծագած վէճ մը պատճառ դարձաւ, որ Աւստրալիա առանձինն ստանձնէ մրցաշարքը հիւրընկալելու պարտականութիւնը:

Անշուշտ, նոր զելանտացիք լուռ պիտի չանցնին այս հարցին վրայէն, այլ պիտի փորձեն իրենց արժանապատուութիւնը փրկել վրէժխնդրութեամբ, այսինքն՝ պարտութեան մատնելով ախոյեան աւստրալիացիները եւ գահընկէց ընելով զանոնք: Միւս կողմէ, աւստրալիացիք պիտի փորձեն խուսափիլ նոր զելանտական վրիժառու հարուածէն եւ իրենց լաւագոյնը տալով՝ պահել բաժակը իրենց մօտ:

Աշխարհի տարածքին միլիոնաւոր հանդիսատեսներ, մասնաւորաբար՝ Քանատայէն, Ֆիճիէն, Ճափոնէն, Ուրուկուէյէն, Ֆրանսայէն, Կալիֆոռնիա եւ անշուշտ Աւստրալիայէն ու Նոր Զելանտայէն, պիտի հետեւին այս մրցաշարքին, որուն ամէնէն հետաքրքրական «պահ» պիտի ըլլայ «Օլ Պէյքս»-«Ուոլլըպիզ» հաւանական տաք ճակատումը, որուն ընթացքին համայն աշխարհը լուռ պիտի հետեւի երբեմնի եղբայրական երկու երկիրներու ճակատամարտին...

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՆԱԹԵ

Ճաշկերոյթ Պարահանդէս

Կիրակի, 5 Յունուար 2003
Երեկոյեան ժամը 9:30Լ.Ն սկսեալ
PHOENICIA դասնոսկին մէջ

Երգահանդէս

Երկուշաբթի, 6 Յունուար 2003, Երեկոյեան
ժամը 7:30Լ.Ն սկսեալ, UNESCO-ի տրանսիւն մէջ

Տոմսերը կարելի է ստանալ հետեւեալ կեդրոններէ՝ Obelix գրախանութ, Անթիլիաս Աղբալեան մարզամշակութային կեդրոն, Մըզիեր - Դամազգայինի գրախանութ, Շաղոյեան կեդրոն, Պուրժ Դամուտ - Տիւրքիա Վաչէ, Երկաթ կամուրջի մօտ, Դաճըն - Դամազգայինի «Կոմիտաս» գրախանութ, Չոքաք Էլ Պլաթ Դամազգայինի Լեւոն Շանթ կեդրոն, Պուրժ Դամուտ

Schwarzkopf PROFESSIONAL

OSB